ՈՍՏԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՎԱՌԸ ԱՐՏԱՇԱՏԻ ՄԵՐՁՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

Գ. Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

Հնագիտական նյութերը Արտաշատի հյուսիսային թիկունքում ուրվագծում են անտիկ գարաշրջանի բնակավայրերի խիտ ցանց՝ ներկայիս Վերին Արտաշատ, Նորաշեն, Ներքին Դվին, Հնաբերդ, Քաղցրաշեն, Այգեզարդ, Կանաչուտ, Դեղձուտ, Արևշատ, Դիտակ գյուղերի տարածքում[1]:

Եղիշեի «զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք...», «զնահանգն Արտաշատու և զԱրտաշատ ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զաւանս, որ շուրջ զնովաւ էին...»[2] բնութագրումները վկայում են քաղաքն իր շրջապատով վարչատնտեսական մեկ ամբողջություն լինելու փաստը: Տվյալ դեպքում Արտաշատը իր մերձքաղաքային տնտեսական տարածքով ընդգրկում էր Ոստան Հայոց գավառը: Քաղաքի ներուժը պայմանավորված էր խորայի գրված տարածքի չափերով և արտադրական հզորությամբ: Փոքր Ասիայում անտիկ քաղաքի խորան ընդգրկում էր շուրջ 20—30 կմ շառավղով տարածք, ներգրավելով տարաբնույթ բնակավայրեր՝ գյուղեր, ամրացված բնակավայրեր, անգամ փոքր քաղաքներ[3]: Ուստի Արտաշատի դեպքում Ոստան Հայոց գավառը նման նպատակի հատկացնելը օրվա հրամայական պահանջ էր: Եթե մայրաքաղաքն օղակող երկրագործական գոտին կարող էր անմիջականորեն կառավարել Արտաշատի ինքնավար համայնքը, ապա շուրջ 20 կմ հեռավորության վրա գտնվող միկրոշրջանի գյուղական բնակավայրերի կառավարումը իրականացնում էր անտիկ Դվինը: Այս բնակավայրերի նկատմամբ Դվինի ունեցած հավաքական, առաջնային զերը պայմանավորված էր «բուն սոգոտայի» Վաղարշապատ-Արտաշատ հատվածի վրա գտնվելու, մայրաքաղաքի հյուսիսային մատույցներ հսկող ամրոց-բնակավայր[4] և տաճար-սրբավայր զույգի, ինչպես նաև տնտեսական մեծ ներուժի համադրության անհամեմատելի գերադասելիության պարագայով: Եթե տաճարի վաղեմության հարցը դեռևս ուսումնասիրության ընթացքում է, ապա սրբավայրի գոյությունն այստեղ աներկբայելի է՝ Ք. ա. I հազարամյակի սկզբից ի վեր[5]:

---

[1] Ա. Ա. Քալանթարյան, Դարձյալ Դվինի հիմնադրման մասին (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, № 1, էջ 65), Գ. Գ. Քոչարյան, Դվին անտիկ գարաշրջանում, Ե., 1991, էջ 31—33, Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով, Դիտակի և Տաճարաբակի հետախուզական պեղումներ (Հայկական ՍՍՀ-ում 1975—1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Ե., 1977, էջ 30—31):

[2] Եղիշի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (աշխ. Ն. Տեր-Մինասյանի), Ե., 1957, էջ 68, 79:

[3] Б. С. Голубцова, Сельская община Малой Азии (III в. до н.э.—III в. н. э.), М., 1972, с. 63—64, 70—71; И. С. Свенцицкая, Зависимое население на землях городов Малой Азии в период эллинизма (Вестник древней истории, 1957, № 3,с. 93).

[4] Գ. Քոչարյան, Անտիկ Դվին Արտաշատի պաշտպանական համակարգում (Հանդես ամսօրյա, 1996, № 1—12, էջ 336—359):

[5] Կ. Դ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Ե., 1952, էջ 90—95, К. Х. Кушнарёва, Древнейшие памятники Двина, Е., 1977.

Երասխ, Մեծամոր, Աղատ գետերի հովտում, Արտաշատ մայրաքաղաքի հարևանությամբ, առևտրական հյուսիսային մայրուղիների խաչմերուկում տեղադրված անտիկ Դվինի և շրջակա բնակավայրերի բարգավաճումը պայմանավորված էր ոոոդելի բարեբեր հոդերի և միջազգային աշխույժ առևտրի առկայությամբ։ Թեև այստեղ օրգանական մնացորդներ դրեթե չեն պահպանվել, սակայն արհեստագործական տարբեր նյութերի արտադրանքի ներկայությունը հնարավորություն է ընձեռում հաստատել այդ արհեստների զոյության փաստն ինքնին, ինչպես նաև, ելնելով դրանց օգտագործման ոլորտից, բացահայտել տնտեսության այն բնագավառները, որոնց առկայությունն ուղղակիորեն հաստատող նյութ չի պահպանվել։ Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքի (Դվինի միջնադարյան շերտերի տակ հատվածաբար բացվող, շրջակա բնակավայրերի հետախուզական պեղումներով ու պատահական հայտնաբերումներով բացահայտվող) անտիկ շերտի ուսումնասիրվածության ներկա մակարդակը կարոտ է հնագիտական նյութի համալրման։ Սակայն այսօր արդեն կարելի է, գոնե հիմնական գծերով, ճշտել մայրաքաղաքի ու նրա խորայի փոխհարաբերությունների բնույթը, վերականգնել տնտեսավարման ընդհանուր պատկերը։ Հնագիտական առկա իրերի, դրանց արտադրության վայրի պատրաստման համար անհրաժեշտ միջոցների, կիրառման հնարավոր շրջանակների, քանակական ու որակական չափանիշների պատճառահետևանքային կապի համեմատական վերլուծությամբ բացահայտվում են Արտաշատի խորայի տնտեսական գործունեության բնագավառները։

Խեցեգործություն. դուրդի կավե և քարե անիվների և խեցեղեն բազմատեսակ, մեծաքանակ արտադրանքի առկայությունը, սրա որակական ու ոճական ընդհանրությունը հավաստում են խեցեգործության տեղական արտադրության փաստը[6]: Այս խեցեղենի բնորոշ հիմնական ձևերն ու զունազարդման մոտիվները սերտորեն առնչվում են Արարատյան հովտի խեցեգործական խոշոր օջախների՝ Արմավիրի, Արտաշատի, Գառնիի համաժամանակյա արտադրանքի հետ։ Ժամանակի առավել հատկանշական ձևերի յուրացման փաստն ինքնին վկայում է տեղական արտադրության տեխնիկական հիմքի որոշակի մակարդակի մասին։ Նկատելի են զարդամոտիվների ինքնատիպ լուծումներ (կամարների մեջ թռչունների, ոճավորված կարիճի, պարող մարդակերպ էակների պատկերներ)։ Ուշագրավ են ցլագլուխ կանթերով զունազարդ կարասները։ Հավաքածուն ընդգրկում է երկու հիմնական խումբ՝ առօրյա կենցաղային գործածության խոհանոցային ամանեղեն ու սեղանի սպասք (ըմպանակ, սկուտեղ, ճրագ, թաս-քրեղան, տաշտ, սափոր, ծորակավոր անոթ, կճուճ) և սննդամթերքի տարա (տափաշիշ, կարաս)։ Տափաշշերի քանակական բացարձակ գերազանցությունը, ձևի կայունությունը (սկավառակաձև երկկանթանի իրան), զունազարդման ընդհանրությունը (բաց երանգի հիմնագույնի վրա վառ, մուգ գույնի համակենտրոն շրջանագծեր, կենտրոնում՝ խաչանման զարդապատկեր), չափերի կրկնությունը (հաճախ 16լ տարողությամբ), տեխնիկական բարձր որակը (խեցու կարծրություն, արտաքին գունեղություն և այլն) բավարար հիմք են տալիս պնդելու, որ սրանց արտադրությունը, տնտեսության ներքին պահանջները բավարարելուց զատ, ունեցել է նաև ապրանքային բնույթ։

Քարագործություն և քարակոփություն. պեղումներով բացված անտիկ

---

[6] Դ. Դ. Քոչարյան, Դվինը անտիկ..., էջ 31, 38—52։

շրջանի շինությունների պատերը հիմնականում հում աղյուսից են և նստում են գետաքարով ու կավե շաղախով շարված հիմքերի վրա։ Քննվող տարածքում պատահաբար հայտնաբերված, ինչպես և Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ շենքերի շարվածքի մեջ վերստին օգտագործված, անտիկ շինություններին պատկանող սպիտակ ավազաքարե, տուֆե, բազալտե ճարտարապետական մանրամասները (սյան տորաձև ու «ատտիկական» խարիսխներ և մատնեքավոր գլան, ծոփորի ու քիվի հատվածներ, տանիքի ծածկասալ) և սրբատաշ սալերը (մի մասը կրում է սվաղի, ներկի, որմնանկարի հետքեր) վկայում են մասնագիտական առավել մեծ հմտություն պահանջող որմնագրության գոյությունը և հավաստում ժամանակի ճարտարապետական-կառուցողական մակարդակին բնորոշ պալատական կամ տաճարային շենքերի ներկայությունը[7]։ Քարաշեն նման կերտվածքները քաղաքաշինական կարևոր դեր են ունեցել միջավայրի ծավալատարածական կազմակերպման հարցում։

Նշանակալի տեղ ունի երկրագործական մթերքի (հացահատիկի, խաղողի, յուղատու բույսերի) մշակման, ինչպես նաև արտադրության մեջ օգտագործվող քարե սարք-հարմարանքների խումբը (աղորիք, երկանք, սանդ, հավանգ, տարապան, գուռ, տաշտ, դուրգի անիվ, հեսան), որ վկայում է այստեղ քարակոփության արհեստի գոյության փաստը[8]։

Մետաղագործություն. մետաղե իրերի (գանակներ, պայտ, գամեր, մեխեր, տեղ, նետասլաք, պերճանքի պարզագույն առարկաներ) սակավ քանակը մետաղագործության մակարդակը բացահայտելու հնարավորություն գեռևս չի ընձեռում, սակայն հավանական է դարբնոցի գոյությունը։

Մանածագործություն և կաշեգործություն. հերյունների, իլիկի ղլխիկի, կանեփի հատիկների, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորների առկայությունը վկայում է այս արհեստների գոյությունը առնվազն տնայնագործական մակարդակով։

Հացաբույսերի մշակումը. հավաստում են այստեղ հայտնաբերված աղորիքները, երկանքը, սանդը, ինչպես նաև նստուկին անցք ունեցող տարողունակ կարասները։

Խաղողագործության և գինեգործության համոզիչ վկայություն են տարապանները, գուռը, խեցեղեն մեծաքանակ տարան, վաղ էտելու կորաշեղը գանակները։

Ձիթատու բույսերի մշակության և ձիթագործության ապացույց են տիգկանեփ մշակելու տարապանը, ճրագները, կանեփի հատիկները։

Անասնաբուծության և թռչնաբուծության նյութական վկայություն են խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների և թռչունների ոսկորները, ինչպես նաև անասնապահական մթերքների մշակման խեցեղեն տաշտերը, կճուճները, ծորակավոր կաթնամանները։

Առևտուր. անտիկ Դվինը շրջակա բնակավայրերով մայրաքաղաքին մատակարարում էր հացամթերք, կաթնամթերք, մսեղեն, մրգեղեն, բանջարե-

---

[7] Գ. Գ. Քոչարյան. Դվինի հելլենիստական դարաշրջանի նորագույն շինությունը (Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 4, էջ 221—226), նույնի՝ Դվինը անտիկ..., էջ 20—22, 62—64, 78։

[8] Գ. Գ. Քոչարյան. Դվինը անտիկ..., էջ 34—38, նույնի՝ Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ (Լրաբեր հասարակական գիտություններից, 1990, № 2, էջ 100—103)։

դեն, դինի։ Գինին Հայաստանից արտահանվող ապրանքների շարքում մշտապես եղել է առաջիններից մեկը։ Այստեղ հայտնաբերված տափաշշերի զգալի քանակը հավաստում է միջազգային տարանցիկ առևտրի ուղիների խաչմերուկում, գինու առք ու վաճառքով զբաղվող կենտրոնների՝ Արտաշատի և Վաղարշապատի միջնորդությամբ[9] արտաքին շուկա դուրս գալու փաստը։

Խորայի բնակչությունը Արտաշատից ձեռք էր բերում տեղական արտադրության իրեր (շքեղ սպասք, պորփյուրե սկահակներ, ջնարակած թաս, պերճանքի առարկաներ՝ ապակե և կիսաթանկարժեք քարե ուլունքներ ու բազմանիստ կնիքներ), ինչպես նաև միջազգային առևտրով Հայաստան ներմուծված ապրանքներ՝ օծանելիք, պերճանքի առարկաներ (անուշահոտ յուղերի կավե սրվակ՝ փոքրասիական հելլենիստական քաղաքներից, ապակե սրվակներ՝ սիրիա-սիդոնյան ապակեգործական կենտրոններից, «եգիպտական մածուկից» ուլունք, սաղափև ե կաուրի խեցիներ՝ Միջերկրականի առափնյա երկրներից)[10]։

Խորայի տարածքում պատահարար հայտնաբերված դրամների հույժ սուղ քանակը (Փիլիպոս III Արիդայոսի արծաթե չորեքդրամյանը, Տիգրան Մեծի արծաթե դրախման, Օգոստոս Օկտավիանոսի և Դոմետիանոսի դենարները, Բոսպորի թագավորության արքաներ Ռիսկուպորիդես II-ի սեստերցիան և Ռիսկուպորիդես VI-ի պղնձյա ստաաերը)[11], հիմք է տալիս ենթադրելու, որ ներքին շուկայում գերիշխել է ապրանքափոխանակությունը։

Այսպիսով, վերը քննարկվածից հետևում է, որ Արտաշատի մերձքաղաքային անտեսական տարածքն ընդգրկում էր Ոստան Հայոց գավառ։ Ոռոգելի, բարերեր այս հողի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, թռչնարուծությամբ և տնտեսավարման անհրաժեշտ արհեստներով։ Այստեղ կացութաձևը ինքնարավ բնատնտեսային եղանակն էր, և սեփական արտադրանքի տեսականու պակասը լրացվում էր ապրանքափոխանակությամբ, գյուղատնտեսական մթերքի հավելյալ մասը մայրաքաղաքի շուկա վաճառքի հանելով։ Արտաշատի մերձքաղաքային տարածքում բնակավայրերի հոծ ցանցի առկայությունը հիմք է տալիս կարծելու, որ նորաստեղծ մայրաքաղաքի համարնակեցմանը (սինոյկիսմոս) զուգընթաց, մ.թ.ա. II դ. կատարվել է նաև խորայի բնակավայրերի համարնակեցում, թերևս նաև նորերի հիմնում։ Այս բնակավայրերի կառավարումն իրականացնում էր անտիկ Դվինը, որ քաղաքատիպ ավան էր, իր աշխարհագրական շահեկան դիրքով, ամրոցսրբավայր ֆունկցիայի տեսական համադրությամբ ու տնտեսական նշանակալի ներուժով։ Արդեն IV դ. տրբայանիստ դարձած Դվինի մերձակա գյուղերը աստիճանարար միավորվեցին և կազմեցին քաղաքայնացող բնակավայրի պարբսպապատ թաղամասերը, իսկ մյուսները՝ նրա արվարձանները։ Մայրաքաղաքի ֆունկցիան Դվինին անցնելուն զուգընթաց, Ոստան Հայոց գավառը դարձավ Դվինի մերձքաղաքային տարածքը և «Աշխարհացույցում» վավերացվեց որպես «Ոստան Դբնոյ»[12]։

[9] Ю. А. Солодухо. К вопросу об армяно-иранских торговых связях в IV веке (Исследование по истории народов Востока), М.—Л., 1960. с. 128—132.

[10] Գ. Գ. Քոչարյան. Դվինը անտիկ դարաշրջանում, էջ 49, 52—60, 70—73։

[11] Նույն տեղում, էջ 60, 73—74։

[12] Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 49։

ВОСТАН ХАЙОЦ ГАВАР—ПРИГОРОДНАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ ЗОНА АРТАШАТА

Г. Г. КОЧАРЯН

Резюме

Сравнительный анализ первоисточников и археологических данных античных поселений на северо-востоке города Арташата (Востан Хаиоц гавар) указывает на основные отрасли сельского хозяйства этого региона, на виды ремесел, натурально-хозяйственный уклад жизни, торгово-культурные связи со столицей (снабжение сельскохозяйственными продуктами, приобретение недостающего ассортимента собственного производства путем товарообмена).

Явное превосходство длительного совместного сосуществования крепости-поселения и храма-святилища Двина обусловило его ведущую и объединяющую роль в данном сельскохозяйственном районе, что в числе других факторов предопределило перенесение в 330-ые годы н. э. царского двора из Арташата в Двин. Впоследствии в «Ашхарацуйц»-е (VIIв.) Востан Хайоц гавар засвидетельствован как «Востан Двпой».